Կ-361-23.08.2022,30.09.2022-ՊԻ-011

Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում «անձանց» բառից հետո լրացնել «, իսկ հայտարարագրման հետ կապված իրավակարգավորումների դեպքում՝ նաև օրենսդրությամբ սահմանված հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց» բառերով:»:

Հոդված 2. Օրենքի 21-րդ հոդվածում «արգելքի» բառը փոխարինել «սահմանափակումների» բառով»:

Հոդված 3. Օրենքի 28-րդ հոդվածի 8-րդ մասն «իրավական ակտերով» բառերից հետո լրացնել «, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների» բառերով:

Հոդված 4. Օրենքի 29-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ՝

«**Հոդված 29. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումները**

1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չպետք է իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ

կապված նվերներ ընդունեն կամ դրանք հետագայում ընդունելու համաձայնություն հայտնեն:

2. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պետք է միջոցներ ձեռնարկեն, որ իրենց ընտանիքի անդամները և իրենց հետ փոխկապակցված այլ անձինք չընդունեն նվեր կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն չհայտնեն, եթե առկա է հնարավոր կամ իրական կապ հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների կատարման և ստացված նվերի միջև:

3. Սույն օրենքի իմաստով՝ «նվեր» հասկացությունը ենթադրում է ցանկացած գույքային առավելություն, այդ թվում՝ ներված պահանջը, անհատույց կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով պահանջի զիջումը, անհատույց հանձնված կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով վաճառված գույքը, անհատույց կամ անհամարժեք ցածր գնով մատուցված ծառայությունը կամ կատարված աշխատանքը, ինչպես նաև արտոնյալ փոխառությունը, դրամական միջոցները (կանխիկ, անկանխիկ կամ որևէ այլ ձևով արտահայտված), կրիպտոարժույթը, ուրիշի գույքի անհատույց օգտագործումը կամ այլ գործողությունները, որոնց հետևանքով անձն ստանում է օգուտ կամ առավելություն և որը տրամադրվում է պայմանավորված անձի (այդ թվում նաև փոխկապակցված անձի) պաշտոն զբաղեցնելու հանգամանքով:

4. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին թույլատրվում է ընդունել միայն հետևյալ նվերները.

1) պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերները կամ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը.

2) ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը.

3) կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով և նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքում.

4) օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները:

5. Սույն հոդվածի իմաստով «հյուրասիրություն» է համարվում այն նվերը, որն առաջարկվել, տրվել կամ ստացվել է պաշտոնական հարաբերություններ սկսելու, դրանք ամրապնդելու կամ զարգացնելու նպատակով: Այն ընդգրկում է, բայց չի սահմանափակվում ընդունելության, ժամանցային, սոցիալական կամ սպորտային միջոցառումների հրավերներով և առաջարկներով:

6. Եթե սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված նվերի արժեքը (բացառությամբ 1-ին կետով նախատեսված՝ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունների) գերազանցում է վաթսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը, ապա այն համարվում է պետական կամ համայնքային սեփականություն: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են սահմանված կարգով այն հանձնել պետությանը կամ համայնքին:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված նվերների արժեքը գնահատվում է՝ հիմք ընդունելով այն ողջամիտ շուկայական արժեքը, որը հնարավոր է գնահատել բաց աղբյուրների միջոցով:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված նվերները տնօրինվում են համապատասխանաբար «Պետական գույքի կառավարման մասին» օրենքով կամ տեղական ինքնակառավարման մասին օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը ստացել է նվեր, որը ողջամտորեն կարող է ընկալվել որպես իր պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված, ապա հանրային ծառայողը սահմանված կարգով անմիջապես, սակայն ոչ ուշ քան հնգօրյա ժամկետում, հայտնում է տվյալ մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպչին, դատավորը՝ էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովին, դատախազը, քննիչը՝ համապատասխան մարմնում գործող էթիկայի հանձնաժողովին, այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ տասնհինգօրյա ժամկետում իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների

վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով: Եթե բարեվարքության հարցերով կազմակերպչի, Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի, Էթիկայի հանձնաժողովի կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ստացված խորհրդատվական կարծիքի համաձայն՝ նվերը հանդիսանում է սույն հոդվածի իմաստով թույլատրելի չհամարվող, ապա հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է ապահովել, որ ստացված նվերը վերադարձվի կամ վճարվի դրան համարժեք հատուցում՝ խորհրդատվական կարծիքը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում: Եթե սահմանված ժամկետում նվերը վերադարձնելը կամ համարժեք հատուցում վճարելը հնարավոր չէ, ապա հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է սահմանված կարգով նվերը հանձնել պետությանը կամ համայնքին:

10. Եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձին կամ հանրային ծառայողին հայտնի է դառնում, որ իր ընտանիքի անդամները կամ իր հետ փոխկապակցված անձինք ստացել են նվեր, որը ողջամտորեն կարող է ընկալվել որպես իր պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված, ապա այդ մասին իրեն հայտնի դառնալուց հետո անմիջապես, սակայն ոչ ուշ քան հնգօրյա ժամկետում, հանրային ծառայողը սահմանված կարգով հայտնում է տվյալ մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպչին, դատավորը՝ Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովին, քննիչը, դատախազը՝ Էթիկայի հանձնաժողովին, այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ տասնհինգօրյա ժամկետում իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով: Եթե բարեվարքության հարցերով կազմակերպչի, Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի, էթիկայի հանձնաժողովի կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ստացված խորհրդատվական կարծիքի համաձայն՝ նվերը հանդիսանում է սույն հոդվածի իմաստով արգելված նվեր, ապա հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է միջոցներ ձեռնարկել, որ ստացված նվերը

վերադարձվի կամ վճարվի դրան համարժեք հատուցում՝ խորհրդատվական կարծիք ստանալուց հետո տասնօրյա ժամկետում:

11. Սույն հոդվածի իմաստով փոխկապակցված անձինք են պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը:

12. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և պետական ծառայողների կողմից սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված դեպքերում ստացված նվերը ենթակա է հանձնման պետությանը, իսկ համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց և համայնքային ծառայողների կողմից՝ համապատասխան համայնքին:»:

Հոդված 5. Օրենքի 30-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ՝

«Հոդված 30. Նվերների հաշվառումը և հանձնումը

1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը և հանրային ծառայողը պարտավոր է իր կողմից ստացված թույլատրելի նվերները հաշվառել նվերների հաշվառման ռեեստրում (այուհետ՝ Ռեեստր):

2. Քառասուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող արժողությամբ թույլատրելի նվերները ենթակա չեն հաշվառման, բացառությամբ նույն աղբյուրից վեց ամսվա ընթացքում նվերի ստացման պարբերական (հինգ և ավելի) բնույթ կրող դեպքերի:

3. Օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից հրապարակային կարգով տրվող արարողակարգային նվերները հաշվառման ենթակա չեն:

4. Նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, Ռեեստրի վարման կարգերը, Ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկը, ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև խորհրդատվական կարծիքի տրամադրման

մեթոդական ուղեցույցը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Սույն մասով նախատեսված կարգերով կարող են սահմանվել առանձնահատկություններ՝ պետական մարմիններում առանձին պաշտոնների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման սահմանափակումներով պայմանավորված:»:

Հոդված 6. Օրենքի 31-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Սույն օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեություն է համարվում՝

1) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածով նախատեսված գործունեությունն իրականացնելը,

2) անհատ ձեռնարկատեր լինելը,

3) առևտրային կազմակերպության մասնակից, բաժնետեր, փայատեր լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության բաժնեմասը, բաժնետոմսը, փայն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման կամ չի գերազանցում սույն հոդվածի 8-րդ մասի 11-րդ կետում նշված թույլատրելի բաժնեմասնակցությունը:».

2) 8-րդ մասը լրացնել նոր 10-րդ և 11-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«10) Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա ֆոնդային բորսայում առևտրին թույլատրված արժեթղթեր ունենալը՝ նույն ընկերության կանոնադրական կապիտալում առավելագույնը 1 տոկոս մասնակցության շրջանակներում.

11) բանկի թողարկած կանոնադրական կապիտալի 0,0001%-ը չգերազանցող բաժնեմասնակցությունը ձեռք բերելը:

3) 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնի նշանակվելուց (ընտրվելուց) հետո իրավունք չունեն ձեռք բերել առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ):

Առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու կամ պաշտոնավարման ընթացքում ժառանգություն ստանալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնը ստանձնելուց կամ ժառանգությունն ընդունելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:»:

4) 11-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարիչ կարող են լինել անհատ ձեռնարկատերերը և առևտրային կազմակերպությունները:»:

5) լրացնել նոր 11.1.-ին և 11.2.-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«11.1. Որպես հավատարմագրային կառավարիչ հանդես գալ չեն կարող հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողների հետ փոխկապակցված անձինք:

11.2. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է որևէ ձևով ազդեցություն գործել հավատարմագրային կառավարչի վրա կամ միջամտել հավատարմագրային կառավարման գործընթացին:»:

6) 13-րդ մասում «հանրակրթական» բառից հետո լրացնել «և մասնագիտական» բառերը:

7) լրացնել նոր 18-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«18. Սույն հոդվածի իմաստով փոխկապակցված անձինք են պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը:»:

Հոդված 7. Օրենքի 33-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 33. Շահերի բախումը.**

1. Շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:

2. Պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն կամ իրեն փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ: Գործարար հարաբերությունները ներառում են տնտեսական, տնտեսվարման կամ գործարքներից ծագող ցանկացած հարաբերություններ, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել օգուտների ստացման այդ հարաբերությունների մասնակիցների կամ նրանցից որևէ մեկի համար: Քաղաքական հարաբերությունները ներառում են որևէ կուսակցության մասնակցության կամ տվյալ կուսակցության այլ անդամների հետ ունեցած գործարար կամ այլ գործնական կամ անձնական կապի ուժով ծագող հարաբերությունները:

3. Իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնավոր շահերով առաջնորդվել չի համարվում այն դեպքը, երբ տվյալ գործողությունը (անգործությունը) կամ որոշումն ունի համընդհանուր կիրառելիություն կամ անդրադառնում է անձանց լայն շրջանակի վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ակնհայտ է, որ որոշումը կամ գործողությունը (անգործությունը) ուղղված են ապահովելու արտոնություն պաշտոն զբաղեցնող անձի, նրա հետ փոխկապակցված անձի կամ վերջիններիս անդամակցած առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպությունների համար:

4. Պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման իրավիճակի առաջացումից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելուց կամ որոշում ընդունելուց, այդ թվում՝ որոշման կայացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներին (փաստաթղթերի նախագծերի կազմում, քննարկումների կազմակերպում, որոշման վրա ազդեցություն ունեցող հանձնախմբերի ձևավորում և այլն) մասնակցելուց կամ այլ կերպ որոշման կայացման գործընթացին մասնակցելուց:

5. Եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը (անգործությունը) կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, ապա պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է 10-օրյա ժամկետում իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին ներկայացնել գրավոր հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին, որը ենթակա է քննարկման անհապաղ:

6. Պաշտոն զբաղեցնող անձի վերադասը կամ անմիջական ղեկավարը գրավոր հայտարարության ուսումնասիրության հիման վրա ձեռնարկում է կամ առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված հետևյալ քայլերից մեկը կամ մի քանիսը միաժամանակ.

1) սահմանափակել պաշտոն զբաղեցնող անձի հասանելիությունը որոշակի տեղեկատվության,

2) տվյալ հարցը քննարկելու և լուծելու իրավասությունը հանձնարարել պաշտոն զբաղեցնող այլ անձի, եթե դա օրենքով արգելված չէ,

3) պաշտոն զբաղեցնող անձի համաձայնությամբ սահմանել ժամկետ շահերի բախումը վերացնելու համար,

4) սահմանափակել տվյալ դեպքում պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունները, հայեցողության շրջանակը, եթե դա օրենքով արգելված չէ,

5) ձեռնպահ մնալ կոլեգիալ մարմիններում որոշում կայացնելուց, եթե համապատասխան հարաբերությունը կարգավորող օրենքում այլ բան նախատեսված չէ,

6) շահերի բախման բացակայության դեպքում շարունակել կամ վերսկսել պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարումը:

7. Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում պարտավոր է այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, որն առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր,

այդ թվում՝ հանդես գալ կոնկրետ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ:

8. Նախքան վերադասի կամ անմիջական ղեկավարի գրավոր համաձայնությունը կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկությունը ստանալը անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ անհապաղ գործողություն կատարելը կամ որոշում կայացնելը պայմանավորված է անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ՝ այդ մասին տեղեկացնելով վարույթի մասնակիցներին, իր վերադասին կամ անմիջական ղեկավարին, իսկ վերադասին կամ անմիջական ղեկավար չունենալու դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

9. Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի առնչությամբ շահերի բախման իրավիճակի առկայության մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունը կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը եռօրյա ժամկետում հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական կայքէջում: Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացության կապակցությամբ ներկայացնել հրապարակային պարզաբանում, որը ստացվելու պահից եռօրյա ժամկետում հրապարակվում է այն մարմնի պաշտոնական կայքէջում, որտեղ նա պաշտոն է զբաղեցնում:

10. Օրենքով նախատեսված դեպքերում սույն հոդվածով սահմանված դրույթների խախտումը առաջացնում է վարչական կամ կարգապահական պատասխանատվություն:

Կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կիրառելի չեն քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ:

Ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կարող են կիրառվել օրենքով նախատեսված դեպքերում:

11. Սույն հոդվածի իմաստով փոխկապակցված անձինք են՝

1) պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը.

2) պաշտոն զբաղեցնող անձի հետ ազգակցական և ոչ ազգակցական սերտ անձնական հարաբերություններ ունեցող անձինք, այդ թվում՝ համատեղ բնակվող անձինք, փաստացի խնամքի տակ գտնվող անձինք, ընդհանուր տնտեսական շահ ունեցող անձինք.

3) այն կազմակերպությունը, որին մասնակցության և (կամ) պայմանագրի հիման վրա պաշտոն զբաղեցնող անձը կամ նրա հետ փոխկապակցված անձը օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի տնօրինելու (այդ թվում՝ առք ու վաճառքի, համատեղ գործունեության պայմանագրի, հանձնարարության, լիազորագրի կամ այլ գործարքների միջոցով) կազմակերպության կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին, կանխորոշելու այդ կազմակերպության կողմից ընդունվող որոշումները (այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու պայմանները) և (կամ) տալու այդ կազմակերպության կողմից իր հիմնական գործունեությանն առնչվող պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ:

12. Սույն հոդվածի դրույթները տարածվում են պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև հանրային ծառայողների վրա: Դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ սույն հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ մասերը չեն տարածվում:»:

Հոդված 8. Օրենքի 34-րդ հոդվածում՝

1) լրացնել նոր 1.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք են համարվում նաև պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրած հիմնադրամների, 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարները (կոլեգիալ գործադիր մարմնի անդամները), որոնք օրենսդրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով ներկայացնում են գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի իրավիճակային հայտարարագիր:»:

2) 5.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքերում անձինք մեկամսյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի իրավիճակային հայտարարագիր: Հայտարարատու պաշտոնատար անձը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքում պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո՝ երկու տարվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի իրավիճակային հայտարարագիր: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով իրավիճակային հայտարարագիր չներկայացրած անձը համարվում է հայտարարագիր չներկայացրած կամ ժամկետի խախտմամբ ներկայացրած:»:

Հոդված 9. Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր 6-րդ և 7-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ սահմանված կարգով տեղեկություններ է տրամադրում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին.

7) հանրային ծառայողներին տրամադրում է իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ նվերների ստացման իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք:»:

Հոդված 10. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7.1-րդ գլխով.

«**ԳԼՈՒԽ 7.1**

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Հոդված 46.1. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուն

1. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուն պետական կամ համայնքային ծառայություն իրականացնող կամ հանրային պաշտոն զբաղեցնող այն անձն է, ով ապահովում է համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավասության շրջանակներում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքների համակարգումը:

2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են ապահովել հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի և վերջինիս փոխարինող առնվազն մեկ անձի նշանակումը, որը համատեղվում է այդ անձանց այլ գործառույթների հետ:

Հոդված 46.2. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի իրավունքները և պարտականությունները

1. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուն՝

1) պարտավոր է իր իրավասության շրջանակներում համագործակցել իրավասու մարմինների հետ, ապահովել ռազմավարական փաստաթղթերով նախատեսված

հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների իրականացումը, հաշվետվությունների տրամադրումը, ինքնագնահատման զեկույցների կազմումը, հարցաշարերի լրացումը, մասնակցությունը հակակոռուպցիոն ոլորտին առնչվող քննարկումներին,

2) պարտավոր է տրամադրել համապատասխան մարմնի գործառութներին առնչվող ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվություն, պարզաբանումներ, միջոցներ ձեռնարկել համապատասխան մարմնի կողմից ոլորտային միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու ուղղությամբ,

3) իրավունք ունի համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի շրջանակներում տվյալ մարմնի ստորաբաժանումներից պահանջել և ստանալ տեղեկատվություն,

4) իրավունք ունի հակակոռուպցիոն քաղաքականության և մոնիթորինգի համար պատասխանատու մարմնից պահանջել և ստանալ մեթոդական աջակցություն, խորհրդատվություն ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների վերաբերյալ:

Հոդված 46.3. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի գործունեության համակարգումը

1. Հակակոռուպցիոն ռազմավարության և այլ ծրագրերի իրականացման շրջանակներում Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներին մեթոդական աջակցությունը, խորհրդատվությունը, ինչպես նաև ոլորտային միջազգային պարտավորությունների շրջանակներում վերջիններիս աշխատանքների իրականցման համակարգումն ապահովում է հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի համար պատասխանատու պետական մարմինը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված լիազորությունների իրականացման շրջանակում հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի համար պատասխանատու պետական մարմինը իրավունք ունի հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուից պահանջել և ստանալ տեղեկություններ և հիմնավորող փաստաթղթեր հակակոռուպցիոն ռազմավարության և այլ ծրագրերի, ոլորտային միջազգային պարտավորությունների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ, ներկայացնել ոլորտային միջազգային պարտավորությունների համակարգումից բխող առաջարկություններ:»:

Հոդված 11. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված՝ նոր խմբագրությամբ շարադրվող 29-րդ հոդվածի 6-11-րդ մասերով և 5-րդ հոդվածով նախատեսված՝ նոր խմբագրությամբ շարադրվող 30-րդ հոդվածի 1-2-րդ մասերով սահմանված կարգավորումները գործելու են սույն օրենքից բխող համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից:

3. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

4. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

5. Սույն օրենքի 8-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում համապատասխան աշխատակիցների պաշտոնի անձնագրերով կամ օրենքով սահմանված այլ իրավական հիմքով նախատեսվում են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների և վերջիններիս գործունեությունը համակարգողների գործառույթները:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի և հարակից իրավական ակտերի նախագծերի (այսուհետ նաև՝ Նախագծերի փաթեթ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շահերի բախման, անհամատեղելիության պահանջների և նվերների ինստիտուտի վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումների կատարելագործման, ինչպես նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների (ի թիվս այլոց՝ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) «Կոռուպցիայի կանխարգելումը պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում» վերտառությամբ 2016 թվականի փետրվարի 25-ին հրապարակված թիվ Greco Eval IV Rep (2015) 1E[1] (գնահատման զեկույց) և 2021 թվականի սեպտեմբերի 22-ին հրապարակված թիվ GrecoRC4(2021)15[2] (համապատասխանության զեկույց) զեկույցների հանձնարարականներ) կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ:

[1] Greco Eval IV Rep (2015) 1E, Evaluation Report (4th Evaluation Round) https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806c2bd8

[2] GrecoRC4(2021)15, Interim Compliance Report (4th Evaluation Round) https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680a3fcad

2. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիր

Նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի վերափոխման ռազմավարությամբ (2050), որի հիմնական նպատակներից մեկը պետական մարմինների գործունեությունը ավելի թափանցիկ, արդյունավետ, վերահսկելի և մասնակցային, ինչպես նաև, բարեվարքության նորմերին համապատասխանող, պատասխանատու և արհեստավարժ հանրային ծառայողներ ունենալն է: Նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշման (այսուհետ՝ Հակակոռուպցիոն ռազմավարություն) միջոցառումների ծրագրի 7-րդ, 17-րդ և 18-րդ կետերի կարգավորումներով, որոնցով նախատեսվում է համապատասխանաբար հստակեցնել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջները, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում այն հավատարմագրային կառավարման հանձնելու մեխանիզմները, կատարելագործել նվերների ինստիտուտը, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում նշանակել հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներ և ամրագրել վերջիններիս գործառույթները:

Միաժամանակ, Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշման հավելվածի 1-ի 16-րդ՝ «Կոռուպցիայի դեմ պայքարը» նպատակի 16.3-րդ միջոցառմամբ նախատեսվում է մշակել «Հանրային ծառայության մասին» օրենքում (այսուհետ նաև՝ Օրենք)

համապատասխան փոփոխություններ իրականացնելու վերաբերյալ նախագիծ, որն ուղղված կլինի միջազգային փորձի հիման վրա շահերի բախման, այլ սահմանափակումների վերաբերյալ կարգավորումների հստակեցմանը, ինչպես նաև անհամատեղելիության պահանջների վերաբերյալ օրենսդրական դրույթների կատարելագործմանը, իսկ նույն նպատակի 16.4-րդ միջոցառմամբ նախատեսվում է հստակեցնել նվերներ ընդունելու արգելքին առնչվող կարգավորումները, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին վերապահել նվերներ ընդունելու արգելքի պահպանմանը հետևելու, նվերների ռեեստրի վարման, նվերների գրանցման և հաշվառման կարգը սահմանելու գործառույթներ, և ընդունված օրենքների հիման վրա ներդնել նվերների ռեեստր, որի արդյունքում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից ստացված նվերների հաշվառումը և օրենքով սահմանված մյուս գործընթացները կիրականացվեն միասնական մեթոդաբանությամբ և կապահովվեն արդյունավետ վերահսկողության մեխանիզմներ:

3. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումները

ԳՐԵԿՈ-ի կողմից իր 69-րդ լիագումար նիստում ընդունվել է Գնահատման չորրորդ փուլի՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցը, որը հրապարակվել է 2016 թվականի փետրվարի 25-ին՝ Հայաստանի կողմից թույտվություն ստացվելուց հետո (Greco Eval IV Rep (2015) 1E [ԳՐԵԿՈ-ի գնահատման IV զեկույց (2015) 1E]): Զեկույցում ԳՐԵԿՈ-ի կողմից ներկայացվել է 18 հանձնարարական, որոնք վերաբերում են պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելմանը:

Զեկույցում անդրադառնալով հանրային պաշտող զբաղեցնող անձանց կողմից նվերներ ընդունելու արգելքի վերաբերյալ գործող կարգավորումներին՝ ԳՐԵԿՈ-ն նշել է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված նվերների վերաբերյալ

կանոնները, որոնք վերաբերում են ինչպես խորհրդարանի անդամներին, այնպես էլ այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին, վերանայման կարիք ունեն:

Մասնավորապես, ԳՐԵԿՈ-ն անբավարար է գնահատել ստացված նվերները բացահայտելու վերաբերյալ համընդհանուր պարտականության բացակայությունը (բացի եկամուտների տարեկան հայտարարագրեր ներկայացնելու ընդհանուր պահանջից, որը հստակորեն չի սահմանում նվերների կամ այլ օգուտների տեսակները):

Միաժամանակ, ԳՐԵԿՈ-ն արձանագրել է, որ նվերների վերաբերյալ գոյություն ունեցող արգելքներն ու կանոնակարգերը չեն ընդգրկում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների հետ փոխկապակցված անձանց շրջանակը: Սահմանված կարգավորումների հնարավոր շրջանցումները կանխելու նպատակով անհրաժեշտ է, որ դրանք տարածվեն նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների հետ փոխկապակցված անձանց տրված կամ առաջարկվող այն նվերների վրա, որոնք կապված են պաշտոնատար անձի պարտականությունների կատարման հետ:

ԳՐԵԿՈ-ն ընդգծել է նաև «նվեր» հասկացության բովանդակությունը հստակեցնելու անհրաժեշտությունը, նշելով, որ գործող կարգավորումներից հասկանալի չէ՝ այդ հասկացությունը վերաբերում է միայն նյութակա՞ն օբյեկտներին, թե՞ այն բավականին լայն է և կարող է ընդգրկել նաև այլ առավելությունները, ինչպիսիք են՝ հյուրասիրությունը, անվճար ճանապարհորդությունը, երրորդ անձանց կողմից տրամադրվող կացարանը, մշակութային և սպորտային միջոցառումների հրավերները և այլն:

Ըստ ԳՐԵԿՈ-ի՝ սահմանված կարգավորումները պարունակում են պարզաբանման կարիք ունեցող մի շարք հասկացություններ, մասնավորապես, «առավելություն, որը ողջամտորեն չէր տրամադրվի պաշտոն չզբաղեցնող անձի», կամ «բարեկամից ստացված նվերները, եթե նվերն էությամբ և չափով ողջամտորեն համապատասխանում է միմյանց միջև հարաբերությունների բնույթին» «բացառությամբ

մերձավոր ազգականից ստացված նվերների», «պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների ժամանակ տրվող նվերները կամ կազմակերպվող հյուրասիրությունը» հասկացությունները: Նման անորոշ հասկացություններն ստեղծում են տարբեր չարաշահումների վտանգ, մինչդեռ վերը նշված հարցերի վերաբերյալ գործնական ուղեցույցները պետք է հիմնված լինեն և բխեն օրենսդրական կարգավորումներից և հանրային ծառայողների վարքագծի կանոններից:

ԳՐԵԿՈ-ն առաջարկել է մշակել պատգամավորների, դատավորների, դատախազների կողմից նվերներ ընդունելու նկատմամբ կիրառվող կանոններ, որպեսզի հնարավոր լինի տալ այնպիսի հստակ սահմանումներ, որոնք կընդգրկեն ցանկացած օգուտ, այդ թվում՝ բնաիրային օգուտներն ու փոխկապակցված անձանց տրամադրվող օգուտները, ներմուծել ստացված նվերների մասին վերահսկողություն իրականացնող համապատասխան մարմին հայտնելու պահանջ, իսկ դատավորներին առնչվող հատուկ դեպքում՝ նվազեցնել գործող այն շեմերը, որոնց դեպքում պահանջվում է հայտնել նվերի մասին:[3]

ԳՐԵԿՈ-ն արձանագրել է նաև, որ թե՛ «Հանրային ծառայության մասին» օրենքի, թե՛ Դատական օրենսգրքի՝ թույլատրելի նվերների վերաբերյալ կարգավորումներում առկա են անորոշ ձևակերպումներ: Օրենքով որոշ նվերների և հյուրասիության մասին հայտնելու պահանջ սահմանված չէ, օրինակ «սովորաբար կազմակերպվող հյուրասիրություն», «կրթաթոշակ, դրամաշնորհ կամ նպաստ, որը տրվել է հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով և նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի հետևանքով», «բարեկամից ստացված նվերները, եթե նվերն էությամբ և չափով ողջամտորեն համապատասխանում է միմյանց միջև հարաբերությունների բնույթին»:

---

[3] Պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցում գնահատվում են Հայաստանի իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցառումները՝ ուղղված ԳՐԵԿՈ-ի կողմից իր 69-րդ լիագումար նիստում ընդունված՝ Գնահատման չորրորդ փուլի՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցում ներկայացված հանձնարարականների կատարմանը (2015 թվականի հոկտեմբերի 16), այն հրապարակվել է 2016 թվականի փետրվարի 25-ին (Greco Eval IV Rep (2015) 1E [ԳՐԵԿՈ-ի գնահատման IV զեկույց (2015) 1E]):

Արձանագրվել է նաև, որ առկա չեն նվերների հաղորդման և գրանցման կոնկրետ մեխանիզմներ,[4] իսկ ընթացիկ կարգավորումները, որոնց համաձայն՝ նվերները ստուգվում են միայն որպես տարեկան եկամուտների հայտարարագրերի մաս՝ այնքանով, որքանով դրանք հանդիսանում են գույք կամ եկամուտ, ակնհայտորեն բավարար չեն ապահովելու համար շարունակական և համապարփակ վերահսկողություն:[5]

ԳՐԵԿՈ-ն հրապարակված զեկույցում առաջարկում է ներդնել մեխանիզմներ, այդ թվում՝ նախատեսելով համապատասխան պատժամիջոցներ՝ ապահովելու համար անկախ, շարունակական և ակտիվ վերահսկողություն էթիկայի կանոնների և անհամատեղելիության պահանջների, շահերի բախման և նվերների ընդունման սահմանափակումների պահպանման նկատմամբ[6]:

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջները.

Նախագծով հստակեցվել, վերախմբագրվել են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության վերաբերյալ առկա կարգավորումները: Մասնավորապես, նախագծով առաջարկվում է վերախմբագրել և ընդլայնել «կրթական աշխատանք» եզրույթը՝ ներառելով նաև մասնագիտական վերապատրաստումների իրականացումը:

Նախագծով հստակեցվում է նաև ձեռնարկատիրական գործունեության հասկացությունը. մասնավորապես, գործող օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասը տալիս է ձեռնարկատիրական գործունեության հասկացությունը՝ նշելով, որ ձեռնարկատիրական գործունեություն է համարվում՝ 1) անհատ ձեռնարկատեր լինելը,

---

4 https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806c2bd8, pages 16-17

5 https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806c2bd8, page 23

6 https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806c2bd8, page 23

2) առանց պետական գրանցման կամ հաշվառման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում, 3) առևտրային կազմակերպության մասնակից լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության մասնակցի բաժնեմասն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման:

Առկա կարգավորմամբ նախատեսված «առանց պետական գրանցման կամ հաշվառման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում» հասկացությունը տարընկալումների տեղիք է տալիս՝ իրականացվող գործունեության բնույթի կապակցությամբ, ուստի նախագծով հստակեցվել է համապատասխան կարգավորումը:

Օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասը Նախագծով սահմանված կարգավորմամբ վերախմբագրվել է, որի արդյունքում, ձեռնարկատիրական գործունեություն է դիտարկվում երկու խումբ դեպքեր՝

1. ***Կարգավիճակով պայմանավորված:*** Անձը դիտարկվում է ձեռնարկատեր, եթե ունի անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակ կամ առևտրային կազմակերպության մասնակից, բաժնետեր կամ փայատեր է, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության բաժնեմասը, բաժնետոմսը, փայն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման:

2. Գործունեությամբ պայմանավորված: Ձեռնարկատիրական գործունեություն է համարվում, եթե անձն իրականացնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածով նախատեսված գործունեությունը:

Բացի այդ, Օրենքի գործող խմբագրության 31-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետը հղում է կատարում միայն բաժնեմասին՝ բաց թողնելով բաժնետոմսերը և փայերը: Նախագծով լրացվել է նաև այդ բացթողումը:

Բացի այդ, նույն հոդվածի 8-րդ մասում կատարվում է համապատասխան լրացում, որի համաձայն ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա ֆոնդային բորսայում առևտրին

թույլատրված արժեթղթեր ունենալը՝ նույն ընկերության կանոնադրական կապիտալում առավելագույնը 1 տոկոս մասնակցության շրջանակներում և բանկի թողարկած մինչև ընդհանուր չորս միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող անվանական արժեքով բաժնետոմս ունենալը:

«Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի դրույթներով է կարգավորվում նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասերի կառավարման վերաբերյալ հարաբերությունները: Նշված հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ «Առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման»: Ընդ որում, նույն հոդվածի կարգավորումների համաձայն, հավատարմագրային կառավարիչ կարող են հանդիսանալ նաև ոչ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք: Ընդհանուր առմամբ, հարկ է նշել, որ Օրենքի 31-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ կետերով ամրագրված կարգավորումները ըստ էության չեն լուծում իրենց առջև դրված խնդիրը, այն է՝ չեն ապահովում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնավարման ընթացքում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելքի փաստացի պահպանումը:

Վերոնշյալ դիտարկմանը կարելի է հանգել համապատասխան ոլորտները կարգավորող օրենսդրական նորմերի ուսումնասիրության արդյունքում:

Այսպես, «Արժեթղթերի շուկայի մասին» գործող օրենքը կարգավորում է ներդրումային գործունեության հետ կապված հարաբերությունները: Նշված օրենքի 25-րդ հոդվածի համաձայն ներդրումային ծառայություն է համարվում նաև արժեթղթերի փաթեթի կառավարումը: Ներդրումային ծառայություններ կարող են մատուցել միայն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի պահանջներին բավարարող սուբյեկտները

բացառությամբ, նույն օրենքի 30-րդ հոդվածով սահմանված սուբյեկտների: Նշված հոդվածում ամրագրված բացառություններից են հանդիսանում միայն հանրային ծառայողի կամ բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարումը իրականացնող սուբյեկտները: Ստեղծվում է մի իրավիճակ, երբ օրենսդրությամբ պարտադիր պայման չի հանդիսանում պաշտոնատար անձի ունեցած բաժնեմասերի կառավարումը փոխանցել մասնագիտացված կառույցների և անձանց, մյուս կողմից հավատարմագրային կառավարիչներին չեն ներկայացվում նվազագույն պահանջներ: Նման պարագայում չկա օրենսդրական որևէ արգելք հավատարմագրային կառավարիչ նշանակել, օրինակ՝ պաշտոնատար անձի ամուսնուն, չափահաս երեխային, ծնողին կամ այլ փոխկապակցված անձի, ինչի պայմաններում ունենում ենք մի իրավիճակ, երբ հանրային ծառայողներն ու պետական պաշտոնատար անձինք փաստացի շարունակում են զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

Հարկ է նշել, որ աշխարհի մի շարք երկրներում նշված խնդրից խուսափելու համար ներդրվել է, այսպես կոչված, «կույր» հավատարմագրային կառավարման կառուցակարգի ինստիտուտը: Հավատարմագրային կառավարման սույն մեխանիզմի պարագայում առկա են որոշակի պարտադիր պայմաններ: Պայմաններից, թերևս, ամենակարևորը կառավարման հիմնադրի և հավատարմագրային կառավարչի միջև փոխկապակցվածության և միասնական շահի բացակայությունն է: Մյուս կարևոր պայմանը հանդիսանում է այն, որ հավատարմագրային կառավարման հիմնադիրը չպետք է որևէ ձևով ազդեցություն գործի հավատարմագրային կառավարչի վրա կամ միջամտի հավատարմագրային կառավարման գործընթացին:

Այս մեխանիզմը կիրառվում է Կանանդայում[7], Ուկրաինայում[8], ԱՄՆ-ում[9], Խորվաթիայում[10], Սերբիայում[11], Մեծ Բրիտանիայում[12], Հոնկ Կոնգում[13], Թաիլանդում[14] և այլն:

---

[7] Տե՛ս https://laws-lois.justice.gc.ca/eng/acts/c-36.65/page-4.html#h-92254
[8] Տե՛ս https://zakon.rada.gov.ua/laws/show/1700-18#n449

Միջազգային կազմակերպությունները ևս անդրադարձ են կատարել վերոնշյալ համատեքստում հանրային ծառայությունում մասնավոր և հանրային շահերի հավասարակշռման հիմնախնդրին: Օրինակ՝ ՏՀԶԿ-ն հանրային ծառայության ոլորտում նշված խնդիրը կարգավորելու համար, ի թիվս այլ միջոցների, առաջարկում է կիրառել հավատարմագրային կառավարման նշված մոդելը:[15]

Սույն խնդրին անդրադարձ են կատարել ՀՀ-ում գործող ոլորտային քաղաքացիական հասարակության կազմակերպությունները: Մասնավորապես, առաջարկվում է դիտարկել այնպիսի կարգավորումների ներդրումը, որոնք կսահմանափակեն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից գույքի, առևտրային կազմակերպությունում մասնակցության (բաժնեմասը, բաժնետոմսը, փայը)՝ ընտանիքի անդամներին, ինչպես նաև, մերձավոր ազգակցությամբ ու խնամիությամբ կապված անձանց հավատարմագրային կառավարման հանձնելու հնարավորությունները կամ ներդնել «կույր կառավարիչներ»-ի ինստիտուտը[16]:

Ուստի, Նախագծով առաջարկվող ձևակերպմամբ փորձ է արվել սահմանելու նոր կարգավորում, համաձայն որի՝ որպես հավատարմագրային կառավարիչ հանդես գալ չեն կարող հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողների հետ փոխկապակցված անձինք:

Նախագծով ընդլայնվել է առևտրային կազմակերպություններում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողների՝ իրենց մասնակցությունը

---

[9] Տե՛ս https://uscode.house.gov/view.xhtml?req=(title:5a%20section:102%20edition:prelim)

[10] Տե՛ս http://documents.worldbank.org/curated/en/580601478253123042/pdf/AUS11340-WP-p153692-PUBLIC-ConflictofinterestEN.pdf էջ 123

[11] Տե՛ս http://www.acas.rs/law-and-regulations/laws/law-acas/

[12]Տե՛սhttps://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/486508/List_of_Ministers_Interests_Dec_2015.pdf

[13] Տե՛ս https://www.cmab.gov.hk/en/issues/PAO_Code_1.7.2012.pdf

[14] Տե՛ս https://knowledgehub.transparency.org/helpdesk/foreign-exchange-controls-and-assets-declarations-for-politicians-and-publi

[15] Տե՛ս "Managing Conflict of Interest in the Public Sector A toolkit" OECD էջ 19, 103: https://www.oecd.org/gov/ethics/49107986.pdf

[16] ԹԻՀԿ, Շահերի բախման համակարգը և դրա կառավարումը ՀՀ հանրային ծառայության ոլորտում զեկույցից https://www.transparency.am/files/publications/1643389309-0-463573.pdf?v=4 էջեր 35-37

հավատարմագրային կառավարման հանձնելու դեպքերը՝ մասնավորապես ներառելով այն դեպքը, երբ համապատասխան մասնակցությունը ձեռք է բերվում պաշտոնավարման ընթացքում ժառանգություն ստանալու դեպքում. այդպիսի մասնակցություն ձեռք բերելուց հետո մեկ ամսվա ընթացքում բաժնեմասը, բաժնետոմսը, փայը օրենքով սահմանված կարգով պետք է հանձնվի հավատարմագրային կառավարման:

Շահերի բախման հասկացությունը.

Հանրային ծառայության ոլորտում շահերի բախումը կարգավորված է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով: Ըստ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձն իր լիազորություններն իրականացնելիս կատարում է գործողություն կամ ընդունում որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել:

2. Պաշտոն զբաղեցնող անձի՝ իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է անձի լիազորությունների շրջանակում այնպիսի գործողություն կատարելը կամ որոշում ընդունելը (այդ թվում՝ կոլեգիալ մարմնի կազմում որոշում ընդունելուն մասնակցելը), որը թեև ինքնին օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև՝

1) իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

2) իր կամ իր հետ փոխկապակցված անձի անդամակցած ոչ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

3) իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

4) իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակմանը»:

Հարկ է նշել, որ վերոգրյալ հոդվածով տրվող սահմանումը չի արտացոլում շահերի բախման ամբողջական բովանդակությունն ու շրջանակը: Սա պայմանավորված է նախ այն հանգամանքով, որ գործող կարգավորմամբ շահերի բախման իրավիճակը կապվում է պաշտոնատար անձի կողմից կատարվող ակտիվ գործողությունների հետ: Մասնավորապես, ինչպես արդեն իսկ նշվել է վերևում, օրենսդրությամբ շահերի բախման հասկացությունը բնութագրվում է որպես պաշտոն զբաղեցնող անձի՝ իր լիազորություններն իրականացնելիս գործողության կատարումը կամ որոշման ընդունումը: Միևնույն ժամանակ, միջազգային փորձի, ինչպես նաև միջազգային կառույցների զեկույցների և ոլորտային այլ փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շահերի բախումը նկարագրվում է որպես մի իրավիճակ երբ, պաշտոնատար անձի մասնավոր շահը ազդում է վերջինիս պաշտոնեական պարտականությունների իրականացման վրա:

Մասնավորապես, այս տեսանկյունից հետաքրքրական են ԵԽ-ի և ՏՀԶԿ-ի կողմից տրված շահերի բախման սահմանումները: ՏՀԶԿ-ի կողմից մշակված «Հանրային ծառայողների շահերի բախման կառավարման ուղեցույց»-ում (այսուհետ նաև՝ Ուղեցույց) շահերի բախումը սահմանվում է, որպես «պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունների և մասնավոր շահերի միջև բախում, որում պաշտոնատար անձն ունի մասնավոր կարգավիճակից բխող շահեր, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ անձի պաշտոնեական պարտականությունների և գործառույթների վրա»:

ԵԽ-ի «Հանրային պաշտոնյաների էթիկայի տիպային կանոնագրքի մեկնաբանություններ և կիրառում» փաստաթղթի[17] հավելված 2-ի հոդված 13-ում սահմանված է, որ «Շահերի բախումն առաջանում է այնպիսի իրավիճակում, երբ պետական պաշտոնյան ունի մասնավոր շահ, որն ազդում է կամ կարող է ազդել կամ թվում է թե ազդեցություն է գործում իր պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա»:

[17] https://rm.coe.int/16805e2e52

Օրենքի 33-րդ հոդվածը առաջացնում է տարընկալումներ շահերի բախման իրավիճակի տարատեսակների վերաբերյալ: Մասնավորապես, ՀՀ օրենսդրությամբ առկա շահերի բախման իրավիճակի հասկացությունը սահմանում է միայն իրական կամ փաստացի շահերի բախման իրավիճակային դեպքերը՝ դուրս թողնելով պոտենցիալ շահերի բախման իրավիճակները:

Միջազգային կազմակերպությունների կողմից ևս կարևորում են շահերի բախման իրավիճակների կարգավորմանն ուղղված կառուցակարգերի առկայությունը:

ՏՀԶԿ-ի կողմից պոտենցիալ շահերի բախումը նկարագրվում է, որպես իրավիճակ, երբ պաշտոնատար անձի ունեցած մասնավոր շահերը ապագայում որոշակի հանգամանքների փոփոխության արդյունքում կարող են ազդեցություն ունենալ վերջինիս պաշտոնեական գործունեության վրա: Նման իրավիճակ առաջանում է այն ժամանակ, երբ օրինակ պաշտոնատար անձի ընտանիքի անդամը աշխատում է նույն մարմնում և ապագայում կարող է պաշտոնատար անձից պահանջվել իրականացնելու վերահսկողություն իր ընտանիքի անդամի կատարած աշխատանքի նկատմամբ[18]:

ԵԽ/ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրային համագործակցության շրջանակներում մշակված «Պայքար կոռուպցիայի դեմ և լավ կառավարման խթանում/պայքար փողերի լվացման դեմ» զեկույցի[19] շրջանակներում պոտենցիալ շահերի բախումը նկարագրվում է որպես մի իրավիճակ, երբ պաշտոնատար անձի մասնավոր շահերը ապագայում կարող են ազդեցություն ունենալ նրա պաշտոնեական պարտականությունների պատշաճ կատարման վրա:

Շահերի բախման իրավիճակի հասկացության, դրա տարատեսակների բնորոշման վերաբերյալ իրավակարգավորումներ են առկա Լիտվայի[20], Լատվիայի[21]

---

[18] Տե՛ս OECD “Managing Conflict of Interest in the Public Service. oecd guidelines and country experiences” p. 57

[19] /Downloads/ECCU-PCF-Toolkit_REG_-2_2015.pdf

[20] https://publicofficialsfinancialdisclosure.worldbank.org/sites/fdl/files/assets/law-library-files/Latvia_Conflict%20of%20Interest%20Law_2002_consolidated%20as%20of%202007_EN.pdf էջ 2-րդ:

[21] https://publicofficialsfinancialdisclosure.worldbank.org/sites/fdl/files/assets/law-library-files/Lithuania_Conflict%20of%20%20Interest%20Law_1997%20amended%202009_en.pdf էջ 1

«Շահերի բախման մասին», Սերբիայի[22] «Հակակոռուպցիոն գործակալության, մասին», Մոնտենեգրոյի[23] «Կոռուպցիայի կանխարգելման մասին», Ուկրաինայի[24] «Կոռուպցիայի կանխարգելման մասին», Խորվաթիայի[25] «Շահերի բախումը կանխարգելելու մասին» օրենքներով, Կանադայի[26] «Շահերի բախման ակտով» և այլն:

Սույն խնդրին անդրադարձ են կատարել նաև ՀՀ-ում գործող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները և ոլորտային մասնագետները:

Նման դիրքորոշում է արտահայտվել, օրինակ՝ «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակառուպցիան կենտրոն» (ԹԻՀԿ) Հասարակական կազմակերպության կողմից 2021 թվականին մշակված «Շահերի բախման համակարգը և դրա կառավարումը ՀՀ հանրային ծառայության ոլորտում» զեկույցով: Մասնավորապես, նշված զեկույցի շրջանակներում առաջարկվում է «ՀԾՄ օրենքով կամ շահերի բախման կարգավորման առանձին օրենսդրական ակտով սահմանել **նաև պոտենցիալ** շահերի բախման իրավիճակի օրենսդրական գնահատման ու կարգավորման շրջանակները.»[27]:

Այսպիսով, անհրաժեշտություն է առաջացել վերանայելու շահերի բախման՝ ՀՀ օրենսդրությամբ առկա հասկացությունը՝ հստակեցնելով շահերի բախման տարատեսակներից պոտենցիալ շահերի բախման սահմանումը՝ սահմանելով, որ շահերի բախման իրավիճակ է նաև, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերը **կարող են** ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա: Ընդ որում, ի տարբերություն Օրենքի ներկայիս կարգավորումների, որտեղ ըստ էության բացահայտված չէ «մասնավոր շահ» եզրույթի բովանդակությունը, վերոգրյալ փաստաթղթերը նկարագրում են նաև այդ հասկացությունը: Այսպես՝ ՏՀԶԿ Ուղեցույցի 14-րդ կետում պաշտոնատար անձի

---

[22] https://www.refworld.org/docid/4b55c8ec2.html էջ 2-րդ

[23] https://www.rai-see.org/php_sets/uploads/2021/04/RAI-Law-on-Prevention-of-Corruption-Montenegro-EN.pdf էջ 2-րդ

[24] https://zakon.rada.gov.ua/laws/show/1700-18#n449

[25] https://rm.coe.int/fifth-round-evaluation-report-on-croatia-preventing-corruption-and-pro/16809cff22 էջ 21-23

[26] https://laws-lois.justice.gc.ca/eng/acts/c-36.65/page-2.html#docCont

[27] Տե՛ս ԹԻՀԿ, Շահերի բախման համակարգը և դրա կառավարումը ՀՀ հանրային ծառայության ոլորտում, էջ 17, https://www.transparency.am/files/publications/1643389309-0-463573.pdf?v=4,

մասնավոր շահերի շրջանակը սահմանելիս նշվում է, որ «Այս սահմանման մեջ «մասնավոր շահերը» սահմանափակված չեն միայն ֆինանսական կամ դրամային շահերով, կամ այն շահերով, որոնք պաշտոնատար անձին տալիս են անմիջական անձնական շահ: Շահերի բախումը կարող է կապված լինել այդ պաշտոնատար անձի՝ որպես մասնավոր անձի՝ այլ իրավիճակներում իրավաչափ համարվող գործողությունների հետ, նրա պատկանելիությանը այլ կազմակերպություններին կամ դրանց հետ կապերին, ընտանեկան շահերին, եթե այդ շահերը կարող են ողջամտորեն դիտարկվել որպես անձի պաշտոնեական պարտականությունների իրականացման վրա անպատշաճ ազդեցություն ունեցող:»[28]:

ԵԽ-ի «Հանրային պաշտոնյաների էթիկայի տիպային կանոնագրքի մեկնաբանություններ և կիրառում» փաստաթղթի հավելված 2-ի հոդված 13-ի հոդվածի 2-րդ մասում տրված է պաշտոնատար անձի մասնավոր շահերի շրջանակը, որը բնութագրվում է հետևյալ կերպ. «պաշտոնյայի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն, իր ընտանիքին, մերձավոր ազգականներին, ընկերներին և անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ նա ունի նաև գործարար կամ քաղաքական հարաբերություններ: Այն ներառում է նաև նրանց հետ կապված ֆինանսական կամ քաղաքացիական պարտավորությունները»[29]:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտություն է առաջացել նաև գործող օրենսդրական կարգավորումների շրջանակում հստակորեն սահմանել պաշտոնատար անձի մասնավոր շահերի շրջանակը:

Փոխկապակցված անձանց շրջանակը.

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի փոխկապակցված անձինք են համարվում «.... պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու

---

[28] 5 OECD, “Managing Conflict of Interest in the Public Sector. A TOOLKIT”, 2007, p. 97, https://read.oecdilibrary.org/governance/managing-conflict-of-interest-in-the-public-sector_9789264018242-en#page33

[29] CoE «Recommendation No. R (2000) 10 of the Committee of Ministers to Member states on codes of conduct for public officials». Appendix to Recommendation No. R (2000) 10. Model code of conduct for public officials. Interpretation and application, https://rm.coe.int/16805e2e52

զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը, պապը, տատը, թոռը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, մորեղբայրը, քրոջ, եղբոր զավակները, պաշտոն զբաղեցնող անձի մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր, մորեղբոր զավակները, քրոջ, եղբոր, զավակի ամուսիններ»: Ըստ էության, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում շահերի բախման սահմանման մեջ փոխկապակցված անձանց շրջանակը միայն կախվածության մեջ է դրված հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի հետ արյունակցական կապով կապված անձանց հետ: Մինչդեռ, օրինակ, ԵԽ-ի «Հանրային պաշտոնյաների էթիկայի տիպային կանոնագրքի մեկնաբանություններ և կիրառում» փաստաթղթի հավելվածի 13-րդ հոդվածի 2-րդ մասում[30] տրված պաշտոնատար անձի մասնավոր շահերի շրջանակը լայն է. հանրային պաշտոնյայի և ծառայողի կողմից առավելություններ ստանալը ներառում է նաև հանրային պաշտոնյայի մասնավոր (ֆինանսական, տնտեսական, քաղաքական) ավելի լայն շահերի շրջանակ, որոնք պարտադիր չէ որ միայն պայմանավորված լինեն նրա հետ ազգակցական կապով կապված անձանց հետ. օրինակ՝ բիզնեսի գործընկերը, մանկության, կուսակցական կամ գաղափարակից ընկերը, որոնց հետ հանրային պաշտոնյան հնարավոր է ավելի շատ սերտ հարաբերություններ ու շահեր ունենա, քան ազգակցական կապով կապված հարազատի հետ:

ՏՀԶԿ հինգերորդ փուլի գնահատման զեկույցի շրջանակներում նույնպես անդրադարձ է կատարվել «փոխկապակցված անձ» եզրույթի մեկնաբանմանը՝ արձանագրելով, որ առկա կարգավորումներում փոխկապակցված անձանց շրջանակը չափազանց նեղ է սահմանված և ներառում է միայն պաշտոնատար անձի հետ ազգակացական կապի մեջ գտնվող անձանց, այնինչ փոխկապակցված անձանց շրջանակը կարող է ներառել նաև պաշտոնատար անձի հետ ոչ ազգակցական, սակայն սերտ անձնական հարաբերություններ ունեցող անձանց, այդ թվում՝ քաղաքական, տնտեսական, իրավաբանական անձանց հետ, ընկերակցությունների, առևտրային և ոչ

[30] CoE Recommendation No. R (2000) 10 of the Committee of Ministers to Member states on codes of conduct for public officials. Appendix to Recommendation No. R (2000) 10. Model code of conduct for public officials. Interpretation and application, https://rm.coe.int/16805e2e52

առևտրային կազմակերպություններին անդամակցության կամ այլ հարաբերությունների վրա հիմնված շահերը:

Ուստի, նախագծով փորձ է արվել ընդլայնելու փոխկապակցված անձանց շրջանակը՝ ներառելով նաև ոչ միայն ազգակցական կապեր ունեցող անձանց այլև ոչ ազգակցական սերտ անձնական հարաբերություններ ունեցող անձանց, առևտրային իրավաբանական անձանց և այլն:

Շահերի բախման իրավիճակի կառավարումը և լուծումը.

Ներկայումս Օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով կարգավորվում են շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված իրավահարաբերությունները: Մասնավորապես, օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող պաշտոնատար անձը շահերի բախման իրավիճակի առաջացման ժամանակ պետք է դիմի վերջիններիս, որոնք առաջարկում են ձեռնարկել շահերի բախման իրավիճակի լուծման ուղղված քայլեր:

Մասնավորապես, ըստ Օրենքի քննարկվող կարգավորման՝ «Վերադաս անձը կամ անմիջական ղեկավարը ձեռնարկում է կամ առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր: Վերադաս անձը կամ անմիջական ղեկավարն իրավունք ունի տվյալ հարցը քննարկելու և լուծելու իրավասությունը հանձնարարելու պաշտոն զբաղեցնող այլ անձի, եթե դա օրենքով արգելված չէ:»:

Սույն կարգավորման վերլուծությունը ցույց է տալիս, որ ըստ էության շահերի բախման իրավիճակի լուծման տեսանկյունից Օրենքը չունի հագեցած գործիքակազմ: Մասնավորապես, Օրենքով նախատեսվում է ղեկավարի կամ վերադասի հայեցողական լիազորությունը՝ տվյալ հարցը քննարկելու և լուծելու իրավասությունը հանձնարարելու պաշտոն զբաղեցնող այլ անձի: Բացի այդ, բացակայում են պաշտոնատար անձի կողմից շահերի բախման իրավիճակի առաջացման պարագայում իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին գրավոր հայտարարություն ներկայացնելու ժամկետները, ինչը նախագծով ևս կարգավորվել է:

Նախագծով փորձ է արվել Օրենքի գործող իրավակարգավորումներում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին գրավոր հայտարարություն

ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց թվին ավելացնելու նաև քաղաքական պաշտոն զբաղեցնող անձնանց:

Միևնույն ժամանակ, միջազգային փորձի ուսումնասիրությունը, ինչպես նաև ոլորտային միջազգային կառույցների ուղենիշային փաստաթղթերը սահմանում են շահերի բախման իրավիճակի լուծման առավել լայն մեխանիզմներ: Օրինակ՝ ՏՀԶԿ ուղեցույցով[31] նման իրավիճակներում առաջարկվող գործիքակազմից է պաշտոնատար անձին որոշակի տեղեկատվության հասանելիությունից զրկելը, պաշտոնատար անձի լիազորությունների վերանայումը, պաշտոնյայի տեղափոխությունն ու պարտականությունների շրջանակի վերանայումը և այլն:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շահերի բախման իրավիճակի լուծման նմանատիպ լայն մեխանիզմներ առկա են Ուկրաինայում[32], Կանադայում[33] և մի շարք այլ երկրներում: Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ է վերանայել նաև Օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը՝ այն համապատասխանեցնելով միջազգայնորեն գործող կարգավորումներին:

Միաժամանակ, Օրենքի գործող կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շահերի բախման պահանջների պահպանման նպատակով կիրառվող պատասխանատվության մեխանիզմները ևս վերանայման կարիք ունեն, որի արդյունքում Նախագծով շահերի բախման դրույթների խախտումը արձանագրելու պարագայում առաջարկվում է պատասխանատվության երկու մեխանիզմ՝ վարչական կամ կարգապահական պատասխանատվություն:

Հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող անձանց ընդլայնումը.

Հանրային ծառայության ոլորտում հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց շրջանակը սահմանված է Օրենքի 34-րդ հոդվածով, սակայն դրանց մեջ չեն ներառված պետական և համայնքային ոչ

31

32 Տե՛ս Закон украины “о предотвращении коррупции”, стат. 28-36, https://zakon.rada.gov.ua/laws/show/1700-18#Text

33 Տե՛ս “Conflict of Interest Act” https://laws-lois.justice.gc.ca/eng/acts/c-36.65/page-1.html#docCont

առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրած հիմնադրամների, 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարները:

Հաշվի առնելով նշված կազմակերպությունների գործունեության բնույթը, դրանից բխող ռիսկերը (օրինակ՝ նշված կազմակերպությունները հանդիսանում են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով պատվիրատու)՝ անհրաժեշտություն է առաջացել Նախագծով վերոնշյալ կազմակերպությունների գործադիր մարմնի ղեկավարների և նրանց ընտանիքի անդամների համար նույնպես նախատեսելու գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն:

Հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող անձանց շրջանակի ընդլայնման մասին պահանջը ամրագրված է նաև Միջազգային կազմակերպությունների կողմից: Մասնավորապես, ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է ձգտի համապատասխան դեպքերում և իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, սահմանել այնպիսի միջոցներ և համակարգեր, որոնք պաշտոնատար անձանց կպարտավորեցնեն համապատասխան մարմիններին ներկայացնել հայտարարագրեր, inter alia, արտաքին գործունեության, զբաղմունքի, ներդրումների, ակտիվների մասին և էական նվիրատվությունների կամ օգուտների մասին, որոնց հետ կապված կարող է շահերի բախում առաջանալ որպես պաշտոնատար անձ նրանց գործառույթների առնչությամբ: Սույն օրենսդրական բացին հանձնարարականի տեսքով անդրադարձ է կատարվել նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ)-ի՝ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի հինգերորդ փուլի շրջանակներում՝ հատկապես կարևորելով հայտարարագրման պահանջի սահմանումը պետական մասնակցությամբ ընկերությունների, ՊՈԱԿ/ՀՈԱԿ-ների ղեկավար կազմի համար:

Պատասխանատվությունը շահերի բախման դրույթների խախտման կապակցությամբ:

Հանրային ծառայության ոլորտում, ինչպես արդեն նշվեց, բացակայում են շահերի բախման դրույթների խախտման կապակցությամբ վրա հասնող պատասխանատվության վերաբերյալ համապատասխան կարգավորումները: Ուստի, Նախագծով անդրադարձ է կատարվել վերոնշյալ օրենսդրական բացի կարգավորմանը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) նախատեսելով մի շարք պատասխանատվության միջոցներ այն դեպքերի կապակցությամբ, երբ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախման վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չի ներկայացնում, նախքան շահերի բախման հանգամանքների վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկությունը ստանալը պաշտոն զբաղեցնող անձը շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) է կատարում կամ որոշում է ընդունում, ինչպես նաև այն իրավիճակում, երբ պաշտոն զբաղեցնող անձը շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացրած առաջարկությանն առերևույթ հակասող գործողություն (անգործություն) է կատարում կամ որոշում է ընդունում:

Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շահերի բախման և անհամատեղելիության պահանջների վերաբերյալ օրենսդրական կարգավորումների կատարելագործման արդյունքում անհրաժեշտություն է առաջացել կատարելու օրենսդրական փոփոխություններ և լրացումներ ոլորտային օրենքներում: Մասնավորապես, Նախագծով առաջարկվում է լրացում կատարել՝

- «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-169

օրենքում՝ նախատեսելով սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնելու վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու պարտականություն:

- «Գործունեության իրականացման ծանուցման մասին» 2015 թվականի նոյեմբերի 13-ի ՀՕ-120-Ն օրենքում՝ ծանուցման ենթակա գործունեության տեսակների մեջ ներառելով նաև սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասերի հավատարմագրային կառավարման գործընթացը:
- Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքում՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բաժնեմասը հավատարմագրային կառավարման հանձնումը գրանցելու համար սահմանելով պետական տուրք վճարելու պարտականություն բազային տուրքի 5-ապատիկի չափով, իսկ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասերի հավատարմագրային կառավարման իրավունք ձեռք բերելու համար պետական տուրք վճարելու պարտականություն՝ տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով:
- Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 և Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքներում՝ սահմանելով Համայնքի ավագանու և Երևան քաղաքի ավագանու անդամների գործողությունների իրականացման վերաբերյալ կարգավորումներ շահերի բախման իրավիճակում հայտնվելու պարագայում:
- Դատախազության մասին» 2017 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-198-Ն օրենքում՝ շահերի բախման իրավիճակում հայտվելու պարագայում դատախազի գործողությունների իրականացման վերաբերյալ կարգավորումներ:
- «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» 2014 թվականի մայիսի 19-ի ՀՕ-25-Ն օրենքում՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց՝ շահերի բախման իրավիճակում հայտվելու պարագայում գործողությունների իրականացման վերաբերյալ կարգավորումներ:

Ի լրումն վերոգրյալի՝ Նախագծով առաջարկվում է նաև փոփոխություն կատարել հարակից մի շարք այլ օրենքներում՝ կարգավորումների ներդաշնակեցումն ապահովելու նպատակով:

Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներ.

Միաժամանակ, Հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում 2022 թվականին իրականացված փոփոխություններով սահմանվեց միջոցառում, որն ուղղված էր Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների վերաբերյալ կառուցակարգերի ներդրմանը: Մասնավորապես, Հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում նախատեսվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների (անձ կամ ստորաբաժանում) նշանակում և գործառույթների ամրագրում համապատասխան փաստաթղթերում:

Բացի այդ, ՏՀԶԿ-ի շրջանակներում ստանձնած միջազգային պարտավորությունների համատեքստում կարևորվում է Հակակոռուպցիոն ռազմավարությունների համակարգման և մոնիթորինգի գործառույթների իրականացման ապահովումը: Նշվածի շրջանակներում ՏՀԶԿ-ի կողմից կարևորվում է համակարգման և մոնիթորինգի գործառույթների իրականացումը նորմատիվ իրավական ակտերով մասնագիտացված և կենտրոնացված ստորաբաժանման կողմից, որն ունի տեղեկատվություն պահանջելու և ստանալու, Հակակոռուպցիոն ռազմավարություններից բխող հանդիպումներին մասնակցության ապահովում, մոնիթորինգի շրջանակներում հաշվետվությունների լրացում և տեղեկատվության ներկայացում պահանջելու լիազորություններ: Բացի այդ, կարևորվում է համապատասխան ստորաբաժանման կողմից Հակակոուպցիոն ռազմավարությունների շրջանակներում պատասխանատու մարմիններին մեթոդական աջակցության, խորհրդատվությունների տրամադրումը՝ հակակոռուպցիոն քաղաքականությունից բխող միջոցառումների իրականացման նպատակով:

Ներկայումս հակակոռուպցիոն մոնիթորինգի և գնահատման գործընթացը թեև ապահովվում է հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակող և մոնիթորինգ

իրականացնող մարմնի կողմից, սակայն այդ գործընթացին, ինչպես նաև ոլորտային միջազգային պարտավորությունների կատարմանը էապես խոչընդոտում է բազմաթիվ պետական մարմիններում, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի նկատմամբ հսկողություն իրականացնող պատասխանատու ստորաբաժանում կամ պաշտոնատար անձ նշանակված չլինելու հանգամանքը, ներգերատեսչական մակարդակում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման աշխատանքների համակարգման բացակայությունը: Վերոնշյալի համատեքստում հարկ է հավելել, որ դեռևս Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1141-Ն որոշմամբ հաստատված 2015-2018 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագրի հավելված 1-ի 38-րդ կետով սահմանվել էր, որ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման համար պատասխանատու մարմիններում պետք է նշանակվեն հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուներ (անձ/ստորաբաժանում), պատասխանատուների պաշտոնների անձնագրերում (աշխատանքի նկարագիր) պետք է ներառվեն հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումից բխող գործառույթներ, յուրաքանչյուր պատասխանատու մարմնում պետք է նշանակվի նաև հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումը համակարգող պաշտոնատար անձ՝ առնվազն աշխատակազմի ղեկավարի կամ մարմնի ղեկավարի տեղակալի մակարդակով: Սակայն, մոնիթորինգի շրջանակներում պարզ է դարձել, որ մի շարք մարմիններում նշանակված չեն հակակոռուպցիոն պատասխանատուներ, իսկ հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներ ունեցող մարմիններում այդ անձանց՝ հակակոռուպցիոն ծրագրերի իրականացմանն առնչվող գործառույթները որևէ իրավական ակտով ամրագրված չեն. նման պայմաններում ներգերատեսչական մակարդակում միասնական համակարգվածությունը չի ապահովվում, իսկ հաճախ հակակոռուպցիոն ծրագրերի տարբեր միջոցառումներ իրականացնում են տարբեր ստորաբաժանումներ՝ դրսևորելով կրկնվող կամ հակասող մոտեցումներ: Պետական մարմիններում ներգերատեսչական մակարդակում կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում աշխատանքների պատշաճ համակարգվածության բացակայությունը

խնդիրներ է առաջացրել նաև ոլորտային միջազգային պարտավորությունների շրջանակներում անհրաժեշտ տեղեկությունները հավաքագրելու, հաշվետվություններ ներկայացնելու գործընթացի ընթացքում: Հատկանշական է նաև, որ ՏՀՀԿ-ի կողմից 2021 թվականի գնահատման շրջանակներում հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման առնչությամբ Հայաստանի Հանրապետության պարտավորությունները գնահատվել են չկատարված այն հիմնավորմամբ, որ միջգերատեսչական մակարդակում հակակոռուպցիոն ծրագրերի համակարգում չի իրականացվում, մի շարք պետական մարմիններում արդեն իսկ նշանակված հակակոռուպցիոն պատասխանատուները բավարար չափով չեն տիրապետում իրենց իրավասություններին, ներգերատեսչական մակարդակում հակակոռուպցիոն ռազմավարության և այլ ծրագրերի իրականացման աշխատանքների պատշաճ համակարգում չի իրականացվում:

4. Առաջարկվող կարգավորման բնույթը

1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումները

Ներկայացված նախագծերի փաթեթով առաջարկվում է ԳՐԵԿՈ-ի կողմից ներկայացված հանձնարարականների, ինչպես նաև միջազգային փորձագետների կողմից իրականացված ուսումնասիրությունների հիման վրա հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերներ ստանալու սահմանափակումներ նախատեսող կարգավորումները համախմբել մեկ իրավական ակտում՝ «Հանրային ծառայության մասին» օրենքում՝ իրականացնելով համապատասխան փոփոխություններ «Հանրային ծառայության մասին», «Կոռուպցիայի կանխարգելման մասին», «Քաղաքացիական ծառայության մասին», «Դատախազության մասին» և մի շարք այլ հարակից օրենքներում: Այդպիսով կապահովվի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելու սահմանափակումների վերաբերյալ կարգավորումների

միասնականությունը և կբացառվի տարբեր օրենքներում տարաբնույթ կարգավորումների առկայությունը:

Ներկայացված օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվում է նվերներ ընդունելու սահմանափակումների խախտման դեպքում կարգապահական պատասխանատվության փոխարեն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների համար սահմանել վարչական պատասխանատվություն:

2. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջները.

Նախագծերի փաթեթով առաջարկվում է Օրենքի 31-րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

- Վերախմբագրել «կրթական աշխատանք» եզրույթը:
- Արգելել հանրային պաշտոն զբաղեցնող անձին և հանրային ծառայողին փոխկապակցված անձի հետ կնքել առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարման պայմանագիր:
- Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հավատարմագրային կառավարման գործունեությունը առաջարկվում է դարձնել ծանուցվող գործունեություն:
- Առաջարկվում է նաև ուժը կորցրած ճանաչել «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ կետը, որը առևտրային կազմակերպության մասնաբաժնի կառավարումը դուրս էր թողնում այդ օրենքի 3-րդ բաժնի կարգավորումներից: Արդյունքում, այդպիսի ծառայությունը կարող էր իրականացվել չլիցենզավորված կազմակերպության կողմից: Նախագծի ընդունման պարագայում այդպիսի իրավիճակը կբացառվի:
- Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասերի կառավարման գրանցումը դարձնել պարտադիր:

Արդյունքում, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասերի և բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի կառավարումը

կդառնա վերահսկելի և կբացառվի պաշտոնյայի հետ փոխկապակցված անձանց որպես հավատարմագրային կառավարիչ հանդես գալը:

Բացի այդ առաջարկվում է սահմանել հստակ ժամկետ, որի ընթացքում պաշտոնյան պարտավոր կլինի պաշտոնավարման ընթացքում ձեռք բերված մասնակցությունը հանձնել հավատարմագրային կառավարման:

- Առաջարկվում է խմբագրել ձեռնարկատիրական գործունեության հասկացությունը:

3. Շահերի բախման հասկացությունը.

Նախագծերի փաթեթով առաջարկվող կարգավորմամբ ընդլայնվում է շահերի բախման հասկացությունը՝ ներառելով պոտենցիալ շահերի բախման իրավիճակը:

Նախագծերի փաթեթով առաջարկվում է նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասում «անձնական շահերով» բառերը փոխարինել «մասնավոր շահերով» բառերով: Այսպիսի փոփոխությունն ավելի ընդգրկուն է դարձնում Օրենքով առկա սահմանումները, միաժամանակ դրանք համապատասխանեցվում են առաջարկվող մյուս կարգավորումներին:

4. Փոխկապակցված անձանց շրջանակը.

Նախագծերի փաթեթով առաջարկվում է ընդլայնել փոխկապակցված անձանց շրջանակը: Առաջարկվող կարգավորման պարագայում այն ներառում է ոչ միայն ազգակցական կապերով կապված անձանց, այլև ոչ ազգակցական սերտ անձնական հարաբերությունների մեջ գտնվող անձանց, ինչպես նաև առևտրային իրավաբանական անձանց և այլն:

5. Շահերի բախման իրավիճակի լուծումը.

Նախագծերի փաթեթով առաջարկվում է հստակեցնել շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված գործիքների շրջանակը, սահմանափակել անհարկի հայեցողության դրսևորման հնարավորությունը, ինչպես նաև, ներդնել կարգավորումներ, որոնք հնարավորություն կընձեռեն կիրառել պատասխանատվության համապատասխան միջոցներ:

6. Հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն ունեցող անձանց ընդլայնումը.

Նախատեսվում է ընդլայնել հայտարարագիր ներկայացնող անձանց շրջանակը՝ ներառելով պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրած հիմնադրամների, 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարներին:

Նախագծերի փաթեթով առաջարկվում է նաև փոփոխություններ և լրացումներ կատարել հարակից մի շարք օրենքներում՝ դրանցում առկա կարգավորումները համապատասխանեցնելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներին:

7.Հակակոռուպցիոն ծրարգրերի պատասխանատուներ.

Նախագծով առաջարկվում է ներդնել հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի (այսուհետ՝ Պատասխանատու) ինստիտուտը, ինչպես նաև սահմանել վերջիններիս և Հակակոռուպցիոն քաղաքականության իրավասու մարմնի լիազորությունները ռազմավարական փաստաթղթերի և միջազգային պարտավորությունների շրջանակներում տարվող աշխատանքների իրականցման և համակարգման ոլորտում: Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի ինստիտուտը ենթադրում է, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում պետական կամ համայնքային ծառայություն իրականացնող կամ հանրային պաշտոն զբաղեցնող համապատասխան անձանց գործառույթներին ի լրումն սահմանել հակակոռուպցիոն ռազմավարություններով, ծրագրերով և ոլորտային միջազգային պարտավորություններով իրականացված կամ իրականացվելիք աշխատանքների համակարգման և ներկայացման գործառույթներ: Յուրաքանչյուր դեպքում մարմինների միջև արդյունավետ և օպերատիվ համագործակցությունն ապահովելու համար առաջարկվում է պետական և տեղական ինքակառավարման մարմիններում նշանակել հակակոռուպցիոն ծրագրի պատասխանատուին փոխարինող

առնվազն 1 անձ, որը պատասխանատուի բացակայության դեպքում կփոխարինի վերջինիս:

5. Ակնկալվող արդյունքները

Ներկայացված նախագծերի փաթեթով ակնկալվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերներ ստանալու սահմանափակումներ նախատեսող կարգավորումները համախմբել մեկ իրավական ակտում՝ «Հանրային ծառայության մասին» օրենքում, ինչի արդյունքում կապահովվի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելու սահմանափակումների վերաբերյալ կարգավորումների միասնականությունը և կբացառվի տարբեր օրենքներում տարաբնույթ կարգավորումների առկայությունը: Միաժամանակ, ներկայացված նախագծերի ընդունման դեպքում կներդրվի նվերների հաշվառման ռեստրի ինստիտուտը, որի հիմնական նպատակներից է պետական համակարգի մարմինների գործունեության թափանցիկության ապահովումը:

Նախագծերի փաթեթի ընդունմամբ ակնկալվում է նաև հստակեցնել «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված շահերի բախման և անհամատեղելիության պահանջների վերաբերյալ կարգավորումները: Մասնավորապես, ակնկալվում է հստակեցնել շահերի բախման հասկացությունը՝ այն դարձնելով ավելի ընդգրկուն՝ ներառելով նաև պոտենցիալ շահերի բախման իրավիճակը: Ակնկալվում է ընդլայնել նաև փոխկապակցված անձանց շրջանակը, հստակեցնել շահերի բախման իրավիճակների կառավարման առկա մեխանիզմները, սահմանել շահերի բախման պահանջների պահպանման նպատակով կիրառվող պատասխանատվության մեխանիզմները և այլն:

Բացի այդ, ակնկալվում է կարգավորել առևտրային ընկերությունների բաժնեմասերի/բաժնետոմսերի հավատարմագրային կառավարման հանձնելու ընթացակարգը՝ այն դարձնելով առավել թափանցիկ և կառավարելի:

Նշված փոփոխությունների արդյունքում ակնկալվում է ապահովել հանրային ծառայության համակարգում բարեվարքության, թափանցիկության ամրապնդումը և հանրային վստահության բարձրացումը, հակակոռուպցիոն ռազմավարության, ոլորտային ծրագրերի և միջազգային պարտավորությունների շրջանակներում տարվող աշխատանքների իրականցման և համակարգման արդյունավետության բարձրացումը:

6. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագծերի փաթեթը մշակվել է ՀՀ արդարադատության նախարարության և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից:

Կ-361-23.08.2022,30.09.2022-ՊԻ-011/1

Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում «անձանց» բառից հետո լրացնել «, իսկ հայտարարագրման հետ կապված իրավակարգավորումների դեպքում՝

նաև օրենսդրությամբ սահմանված հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց» բառերով:»:

Հոդված 2. Օրենքի 21-րդ հոդվածում «արգելքի» բառը փոխարինել «սահմանափակումների» բառով»:

Հոդված 3. Օրենքի 28-րդ հոդվածի 8-րդ մասն «իրավական ակտերով» բառերից հետո լրացնել «, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների» բառերով:

Հոդված 4. Օրենքի 29-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ՝

«**Հոդված 29. Հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումները**

1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները չպետք է իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման հետ կապված նվերներ ընդունեն կամ դրանք հետագայում ընդունելու համաձայնություն հայտնեն:

2. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պետք է միջոցներ ձեռնարկեն, որ իրենց ընտանիքի անդամները և իրենց հետ փոխկապակցված այլ անձինք չընդունեն նվեր կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն չհայտնեն, եթե առկա է հնարավոր կամ իրական կապ հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների կատարման և ստացված նվերի միջև:

3. Սույն օրենքի իմաստով՝ «նվեր» հասկացությունը ենթադրում է ցանկացած գույքային առավելություն, այդ թվում՝ ներված պահանջը, անհատույց կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով պահանջի զիջումը, անհատույց հանձնված կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով վաճառված գույքը, անհատույց կամ անհամարժեք ցածր գնով մատուցված ծառայությունը կամ կատարված աշխատանքը, ինչպես նաև

արտոնյալ փոխառությունը, դրամական միջոցները (կանխիկ, անկանխիկ կամ որևէ այլ ձևով արտահայտված), կրիպտոարժույթը, ուրիշի գույքի անհատույց օգտագործումը կամ այլ գործողությունները, որոնց հետևանքով անձն ստանում է օգուտ կամ առավելություն և որը տրամադրվում է պայմանավորված անձի (այդ թվում նաև փոխկապակցված անձի) պաշտոն զբաղեցնելու հանգամանքով:

4. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին թույլատրվում է ընդունելմիայն հետևյալ նվերները.

5) պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաև աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերները կամ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը.

6) ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը.

7) կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով և նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքում.

8) օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները:

5. Սույն հոդվածի իմաստով «հյուրասիրություն» է համարվում այն նվերը, որն առաջարկվել, տրվել կամ ստացվել է պաշտոնական հարաբերություններ սկսելու, դրանք ամրապնդելու կամ զարգացնելու նպատակով: Այն ընդգրկում է, բայց չի սահմանափակվում ընդունելության, ժամանցային, սոցիալական կամ սպորտային միջոցառումների հրավերներով և առաջարկներով:

6. Եթե սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված նվերի արժեքը (բացառությամբ 1-ին կետով նախատեսված՝ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունների) գերազանցում է վաթսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը, ապա այն համարվում է պետական կամ համայնքային սեփականություն: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են սահմանված կարգով այն հանձնել պետությանը կամ համայնքին:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված նվերների արժեքը գնահատվում է՝ հիմք ընդունելով այն ողջամիտ շուկայական արժեքը, որը հնարավոր է գնահատել բաց աղբյուրների միջոցով:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված նվերները տնօրինվում են համապատասխանաբար «Պետական գույքի կառավարման մասին» օրենքով կամ տեղական ինքնակառավարման մասին օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը ստացել է նվեր, որը ողջամտորեն կարող է ընկալվել որպես իր պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված, ապա հանրային ծառայողը սահմանված կարգով անմիջապես, սակայն ոչ ուշ քան հնգօրյա ժամկետում, հայտնում է տվյալ մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպչին, դատավորը՝ էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովին, դատախազը, քննիչը՝ համապատասխան մարմնում գործող էթիկայի հանձնաժողովին, այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ տասնհինգօրյա ժամկետում իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով: Եթե բարեվարքության հարցերով կազմակերպչի, էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի, էթիկայի հանձնաժողովի կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ստացված խորհրդատվական կարծիքի համաձայն՝ նվերը հանդիսանում է սույն հոդվածի իմաստով թույլատրելի չհամարվող, ապա հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է ապահովել, որ ստացված նվերը վերադարձվի կամ վճարվի դրան համարժեք հատուցում՝ խորհրդատվական կարծիքը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում: Եթե սահմանված ժամկետում նվերը վերադարձնելը կամ համարժեք հատուցում վճարելը հնարավոր չէ, ապա հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է սահմանված կարգով նվերը հանձնել պետությանը կամ համայնքին:

10. Եթե հանրային պաշտոն զբաղեցնող անձին կամ հանրային ծառայողին հայտնի է դառնում, որ իր ընտանիքի անդամները կամ իր հետ փոխկապակցված

անձինք ստացել են նվեր, որը ողջամտորեն կարող է ընկալվել որպես իր պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ տրված, ապա այդ մասին իրեն հայտնի դառնալուց հետո անմիջապես, սակայն ոչ ուշ քան հնգօրյա ժամկետում, հանրային ծառայողը սահմանված կարգով հայտնում է տվյալ մարմնի բարեվարքության հարցերով կազմակերպչին, դատավորը՝ էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովին, քննիչը, դատախազը՝ էթիկայի հանձնաժողովին, այլ հանրային պաշտոն զբաղեցնող անձը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ տասնհինգօրյա ժամկետում իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով: Եթե բարեվարքության հարցերով կազմակերպչի, էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի, էթիկայի հանձնաժողովի կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ստացված խորհրդատվական կարծիքի համաձայն՝ նվերը հանդիսանում է սույն հոդվածի իմաստով արգելված նվեր, ապա հանրային պաշտոն զբաղեցնող անձը կամ հանրային ծառայողը պարտավոր է միջոցներ ձեռնարկել, որ ստացված նվերը վերադարձվի կամ վճարվի դրան համարժեք հատուցում՝ խորհրդատվական կարծիք ստանալուց հետո տասնօրյա ժամկետում:

11. Սույն հոդվածի իմաստով փոխկապակցված անձինք են պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը:

12. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և պետական ծառայողների կողմից սույն հոդվածի 9-րդ մասով սահմանված դեպքերում ստացված նվերը ենթակա է հանձնման պետությանը, իսկ համայնքային պաշտոն զբաղեցնող անձանց և համայնքային ծառայողների կողմից՝ համապատասխան համայնքին:»:

Հոդված 5. Օրենքի 30-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ՝

«Հոդված 30. Նվերների հաշվառումը և հանձնումը

5. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը և հանրային ծառայողը պարտավոր է իր կողմից ստացված թույլատրելի նվերները հաշվառել նվերների հաշվառման ռեեստրում (այուհետ՝ Ռեեստր):

6. Քառասուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող արժողությամբ թույլատրելի նվերները ենթակա չեն հաշվառման, բացառությամբ նույն աղբյուրից վեց ամսվա ընթացքում նվերի ստացման պարբերական (հինգ և ավելի) բնույթ կրող դեպքերի:

~~6.~~7. Օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից հրապարակային կարգով տրվող արարողակարգային նվերները հաշվառման ենթակա չեն:

~~7.~~8. Նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, Ռեեստրի վարման կարգերը, Ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկը, ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև խորհրդատվական կարծիքի տրամադրման մեթոդական ուղեցույցը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Սույն մասով նախատեսված կարգերով կարող են սահմանվել առանձնահատկություններ՝ պետական մարմիններում առանձին պաշտոնների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման սահմանափակումներով պայմանավորված:»:

Հոդված 6. Օրենքի 31-րդ հոդվածում՝

8) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Սույն օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեություն է համարվում՝

1) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածով նախատեսված գործունեությունն իրականացնելը,

2) անհատ ձեռնարկատեր լինելը,

3) առևտրային կազմակերպության մասնակից, բաժնետեր, փայատեր լինելը, բացառությամբ այն դեպքի, երբ առևտրային կազմակերպության բաժնեմասը, բաժնետոմսը, փայն ամբողջությամբ հանձնվել է հավատարմագրային կառավարման կամ չի գերազանցում սույն հոդվածի 8-րդ մասի 11-րդ կետում նշված թույլատրելի բաժնեմասնակցությունը:».

9) 8-րդ մասը լրացնել նոր 10-րդ և 11-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«10) Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա ֆոնդային բորսայում առևտրին թույլատրված արժեթղթեր ունենալը՝ նույն ընկերության կանոնադրական կապիտալում առավելագույնը 1 տոկոս մասնակցության շրջանակներում.

11) բանկի թողարկած կանոնադրական կապիտալի 0,0001%-ը չգերազանցող բաժնեմասնակցությունը ձեռք բերելը:

10) 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնի նշանակվելուց (ընտրվելուց) հետո իրավունք չունեն ձեռք բերել առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ):

Առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցություն (բաժնեմաս, բաժնետոմս, փայ) ունենալու կամ պաշտոնավարման ընթացքում ժառանգություն ստանալու դեպքում հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պաշտոնը ստանձնելուց կամ ժառանգությունն ընդունելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման:»:

11) 11-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարիչ կարող են լինել անհատ ձեռնարկատերերը և առևտրային կազմակերպությունները:»:

12) լրացնել նոր 11.1.-ին և 11.2.-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«11.1. Որպես հավատարմագրային կառավարիչ հանդես գալ չեն կարող հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողների հետ փոխկապակցված անձինք:

11.2. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է որևէ ձևով ազդեցություն գործել հավատարմագրային կառավարչի վրա կամ միջամտել հավատարմագրային կառավարման գործընթացին:»:

13) 13-րդ մասում «հանրակրթական» բառից հետո լրացնել «և մասնագիտական» բառերը:

14) լրացնել նոր 18-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«18. Սույն հոդվածի իմաստով փոխկապակցված անձինք են պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը:»:

Հոդված 7. Օրենքի 33-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 33. Շահերի բախումը.**

1. Շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:

2. Պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն կամ իրեն փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ: Գործարար հարաբերությունները ներառում են տնտեսական, տնտեսվարման կամ գործարքներից ծագող ցանկացած հարաբերություններ, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել օգուտների ստացման այդ հարաբերությունների մասնակիցների կամ նրանցից որևէ մեկի համար: Քաղաքական հարաբերությունները ներառում են որևէ կուսակցության մասնակցության կամ տվյալ կուսակցության այլ անդամների հետ

ունեցած գործարար կամ այլ գործնական կամ անձնական կապի ուժով ծագող հարաբերությունները:

3. Իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնավոր շահերով առաջնորդվել չի համարվում այն դեպքը, երբ տվյալ գործողությունը (անգործությունը) կամ որոշումն ունի համընդհանուր կիրառելիություն կամ անդրադառնում է անձանց լայն շրջանակի վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ակնհայտ է, որ որոշումը կամ գործողությունը (անգործությունը) ուղղված են ապահովելու արտոնություն պաշտոն զբաղեցնող անձի, նրա հետ փոխկապակցված անձի կամ վերջիններիս անդամակցած առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպությունների համար:

4. Պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման իրավիճակի առաջացումից, ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելուց կամ որոշում ընդունելուց, այդ թվում՝ որոշման կայացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներին (փաստաթղթերի նախագծերի կազմում, քննարկումների կազմակերպում, որոշման վրա ազդեցություն ունեցող հանձնախմբերի ձևավորում և այլն) մասնակցելուց կամ այլ կերպ որոշման կայացման գործընթացին մասնակցելուց:

5. Եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը (անգործությունը) կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, ապա պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է 10-օրյա ժամկետում իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին ներկայացնել գրավոր հայտարարություն շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին, որը ենթակա է քննարկման անհապաղ:

6. Պաշտոն զբաղեցնող անձի վերադասը կամ անմիջական ղեկավարը գրավոր հայտարարության ուսումնասիրության հիման վրա ձեռնարկում է կամ առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված հետևյալ քայլերից մեկը կամ մի քանիսը միաժամանակ.

1) սահմանափակել պաշտոն զբաղեցնող անձի հասանելիությունը որոշակի տեղեկատվության,

2) տվյալ հարցը քննարկելու և լուծելու իրավասությունը հանձնարարել պաշտոն զբաղեցնող այլ անձի, եթե դա օրենքով արգելված չէ,

3) պաշտոն զբաղեցնող անձի համաձայնությամբ սահմանել ժամկետ շահերի բախումը վերացնելու համար,

4) սահմանափակել տվյալ դեպքում պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունները, հայեցողության շրջանակը, եթե դա օրենքով արգելված չէ,

5) ձեռնպահ մնալ կոլեգիալ մարմիններում որոշում կայացնելուց, եթե համապատասխան հարաբերությունը կարգավորող օրենքում այլ բան նախատեսված չէ,

6) շահերի բախման բացակայության դեպքում շարունակել կամ վերսկսել պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարումը:

7. Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում պարտավոր է այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, որն առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր, այդ թվում՝ հանդես գալ կոնկրետ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ:

8. Նախքան վերադասի կամ անմիջական ղեկավարի գրավոր համաձայնությունը կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկությունը ստանալը անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց կամ որոշում կայացնելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ անհապաղ գործողություն կատարելը կամ որոշում կայացնելը պայմանավորված է անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ՝ այդ մասին տեղեկացնելով վարույթի մասնակիցներին, իր վերադասին կամ անմիջական ղեկավարին, իսկ վերադասին կամ

անմիջական ղեկավար չունենալու դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

9. Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի առնչությամբ շահերի բախման իրավիճակի առկայության մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունը կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը եռօրյա ժամկետում հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական կայքէջում: Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացության կապակցությամբ ներկայացնել հրապարակային պարզաբանում, որը ստացվելու պահից եռօրյա ժամկետում հրապարակվում է այն մարմնի պաշտոնական կայքէջում, որտեղ նա պաշտոն է զբաղեցնում:

10. Օրենքով նախատեսված դեպքերում սույն հոդվածով սահմանված դրույթների խախտումը առաջացնում է վարչական կամ կարգապահական պատասխանատվություն:

Կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կիրառելի չեն քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ:

Ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կարող են կիրառվել օրենքով նախատեսված դեպքերում:

11. Սույն հոդվածի իմաստով փոխկապակցված անձինք են՝

1) պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը~~, պապը, տատը, թոռը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, մորեղբայրը, քրոջ, եղբոր զավակները, պաշտոն զբաղեցնող անձի մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր, մորեղբոր զավակները, քրոջ, եղբոր, զավակի ամուսինները~~.

2) պաշտոն զբաղեցնող անձի հետ ազգակցական և ոչ ազգակցական սերտ անձնական հարաբերություններ ունեցող անձինք, այդ թվում՝ համատեղ բնակվող

անձինք, փաստացի խնամքի տակ գտնվող անձինք, ընդհանուր տնտեսական շահ ունեցող անձինք.

3) այն կազմակերպությունը, որին մասնակցության և (կամ) պայմանագրի հիման վրա պաշտոն զբաղեցնող անձը կամ նրա հետ փոխկապակցված անձը օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի ուղղակի կամ անուղղակի տնօրինելու (այդ թվում՝ առք ու վաճառքի, համատեղ գործունեության պայմանագրի, հանձնարարության, լիազորագրի կամ այլ գործարքների միջոցով) կազմակերպության կանոնադրական կապիտալի կամ փայաբաժնի կեսից ավելին, կանխորոշելու այդ կազմակերպության կողմից ընդունվող որոշումները (այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու պայմանները) և (կամ) տալու այդ կազմակերպության կողմից իր հիմնական գործունեությանն առնչվող պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ:

12. Սույն հոդվածի դրույթները տարածվում են պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև հանրային ծառայողների վրա: Դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ սույն հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ մասերը չեն տարածվում:»:

Հոդված 8. Օրենքի 34-րդ հոդվածում՝

1) լրացնել նոր 1.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք են համարվում նաև պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կողմից հիմնադրած հիմնադրամների, 50 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության և համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարները (կոլեգիալ գործադիր մարմնի անդամները), որոնք օրենսդրությամբ սահմանված հիմքերի առկայության դեպքում Կոռուպցիայի

կանխարգելման հանձնաժողովի պահանջով ներկայացնում են գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի իրավիճակային հայտարարագիր:»:

2) 5.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.1. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքերում անձինք մեկամսյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի իրավիճակային հայտարարագիր: Հայտարարատու պաշտոնատար անձը «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքում պաշտոնեական պարտականությունների դադարեցումից հետո՝ երկու տարվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի իրավիճակային հայտարարագիր: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով իրավիճակային հայտարարագիր չներկայացրած անձը համարվում է հայտարարագիր չներկայացրած կամ ժամկետի խախտմամբ ներկայացրած:»:

Հոդված 9. Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր 6-րդ և 7-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ սահմանված կարգով տեղեկություններ է տրամադրում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին.

7) հանրային ծառայողներին տրամադրում է իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացման կապակցությամբ նվերների ստացման իրավիճակի լուծմանն ուղղված գործողությունների վերաբերյալ խորհրդատվական կարծիք:»:

Հոդված 10. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7.1-րդ գլխով.

«ԳԼՈՒԽ 7.1

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Հոդված 46.1. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուն

1. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուն պետական կամ համայնքային ծառայություն իրականացնող կամ հանրային պաշտոն զբաղեցնող այն անձն է, ով ապահովում է համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի իրավասության շրջանակներում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքների համակարգումը:

2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են ապահովել հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի և վերջինիս փոխարինող առնվազն մեկ անձի նշանակումը, որը համատեղվում է այդ անձանց այլ գործառույթների հետ:

Հոդված 46.2. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի իրավունքները և պարտականությունները

1. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուն՝

1) պարտավոր է իր իրավասության շրջանակներում համագործակցել իրավասու մարմինների հետ, ապահովել ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների իրականացումը, հաշվետվությունների տրամադրումը, ինքնագնահատման զեկույցների կազմումը, հարցաշարերի լրացումը, մասնակցությունը հակակոռուպցիոն ոլորտին առնչվող քննարկումներին,

2) պարտավոր է տրամադրել համապատասխան մարմնի գործառութներին առնչվող ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվություն, պարզաբանումներ, միջոցներ ձեռնարկել

համապատասխան մարմնի կողմից ոլորտային միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու ուղղությամբ,

3) իրավունք ունի համապատասխան պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի շրջանակներում տվյալ մարմնի ստորաբաժանումներից պահանջել և ստանալ տեղեկատվություն,

4) իրավունք ունի հակակոռուպցիոն քաղաքականության և մոնիթորինգի համար պատասխանատու մարմնից պահանջել և ստանալ մեթոդական աջակցություն, խորհրդատվություն ռազմավարական փաստաթղթերով նախատեսված հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումների և ոլորտային միջազգային պարտավորությունների վերաբերյալ:

Հոդված 46.3. Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի գործունեության համակարգումը

1. Հակակոռուպցիոն ռազմավարության և այլ ծրագրերի իրականացման շրջանակներում Հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուներին մեթոդական աջակցությունը, խորհրդատվությունը, ինչպես նաև ոլորտային միջազգային պարտավորությունների շրջանակներում վերջիններիս աշխատանքների իրականցման համակարգումն ապահովում է հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի համար պատասխանատու պետական մարմինը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված լիազորությունների իրականացման շրջանակում հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի համար պատասխանատու պետական մարմինը իրավունք ունի հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուից պահանջել և ստանալ տեղեկություններ և հիմնավորող փաստաթղթեր հակակոռուպցիոն ռազմավարության և այլ ծրագրերի, ոլորտային միջազգային պարտավորությունների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ, ներկայացնել ոլորտային միջազգային պարտավորությունների համակարգումից բխող առաջարկություններ:»:

Հոդված 11~~0~~. Եզրափակիչ և անցումային դրույթներ

7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

8. Սույն օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված՝ նոր խմբագրությամբ շարադրվող 29-րդ հոդվածի 6-11-րդ մասերով և 5-րդ հոդվածով նախատեսված՝ նոր խմբագրությամբ շարադրվող 30-րդ հոդվածի 1-2-րդ մասերով սահմանված կարգավորումները գործելու են սույն օրենքից բխող համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից:

9. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

10. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

11. Սույն օրենքի 8-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

12. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում համապատասխան աշխատակիցների պաշտոնի անձնագրերով կամ օրենքով սահմանված այլ իրավական հիմքով նախատեսվում են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների և վերջիններիս գործունեությունը համակարգողների գործառույթները

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-361-23.08.2022,30.09.2022-ՊԻ-011/1) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	**«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ հոդված 5**	Առաջարկվում է «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 30-րդ հոդվածում լրացնել դրույթ առ այն, որ օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից հրապարակային կարգով տրվող արարողակարգային նվերները ենթակա չեն հաշվառման:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	Կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ	Առաջարկվում է «Հանրային ծառայության մասին» օրենքի՝ նոր խմբագրությամբ շարադրվող 33-րդ հոդվածում փոխկապակցված անձանց շրջանակից հանել	Ընդունվել է:	Ընդունվել է:

		կատարելու մասին» օրենքի նախագիծ հոդված 7	«պապը, տատը, թոռը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, մորեղբայրը, քրոջ, եղբոր զավակները, պաշտոն զբաղեցնող անձի մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր, մորեղբոր զավակները, քրոջ, եղբոր, զավակի ամուսինները » բառերը:		
3.	Կառավարություն	**«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ**	Առաջարկվում է Նախագծերի փաթեթում կատարել փոփոխություններ՝ համաձայն կից ներկայացված տեղեկանքի: Մասնավորապես, Նախագծով առաջարկվում է «Հանրային ծառայության մասին» օրենքը լրացնել նոր 7.1-րդ գլխով, որն ուղղված է հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուի ինստիտուտի ներդրմանը: Նշված կարգավորման սահմանումը բխում է հակակոռուպցիոն ռազմավարության և ոլորտային միջազգային պարտավորությունների իրականացման ընթացքը, մոնիթորինգը և գնահատումը առավել արդյունավետ դարձնելու անհրաժեշտությունից: Առաջարկվող կարգավորումների ներդրումը պայմանավորված է	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում 2022 թվականին իրականացված փոփոխություններով հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների վերաբերյալ կառուցակարգերի ներդրման ուղղված միջոցառման, ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության շրջանակներում ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումը ապահովելու անհրաժեշտությամբ:		
4.	Կառավարություն	«Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ հոդված 10	Առաջարկվում է Նախագծի 10-րդ հոդվածը (նոր խմբագրությամբ 11-րդ հոդված) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 6-րդ մաս. « 6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում համապատասխան աշխատակիցների պաշտոնի անձնագրերով կամ օրենքով սահմանված այլ իրավական հիմքով նախատեսվում են հակակոռուպցիոն ծրագրերի պատասխանատուների և վերջիններիս գործունեությունը	Ընդունվել է:	Ընդունվել է:

			համակարգողների գործառույթները։»։		